ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1957 Общественные науки

Գ. ՏՈՒՆՅԱՆ, Լ. ՐՈՍՏՈՒ

ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

1957 թ. հունիսի 4—12-ին Ուզբեկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի մայրաքաղաք Տաշքենդում գումարվեց Արևելագետների համամիութենական առաջին կոնֆերանսը, որը նշանակալից երևույթ էր մեր երկրի կուլտուրական կյանքում։

Կոնֆերանսին մասնակցում էին Մոսկվայի և Լենինգրադի, Ուզբեկստանի և Ադրբեջանի, Հայաստանի և Ղազախստանի, Կիրգիզիայի և Վրաստանի, Տաջիկստանի և Թուրքմենստանի, Ուկրաինայի և Ռուսաստանի ֆեդերացիայի մի շարք ավտոնոմ ռեսպուբլիկաների ու մարզերի գիտնականները՝ արևելագետ պատմաբանները, տնտեսագետները, գրականագետները և լեզվաբանները։

Կոնֆերանսին մասնակցում էին նաև Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի, Կորեական Ժողովրդա-դեմոկրատական Ռեսպուբլիկայի, Վյետնամի Դեմոկրատական Ռեսպուբլիկայի, Հնդկաստանի, Չեխոսլովակիայի, Ռումինիայի և այլ երկրների ներկայացուցիչները։

Արևելագետների համամիութենական առաջին կոնֆերանսի բացմանը նախորդել էր նախապատրաստական մեծ աշխատանք։ Կազմկոմիտեն, որի մեջ մտնում էին Մոսկվայի, Լենինգրադի և եղբայրական ռեսպուբլիկաների ականավոր գիտնականները, մշակել էր կոնֆերանսի ծրագիրը, որը ընդգրկում էր գիտական պրոբլեմների լայն շրջանակ։

Կոնֆերանսը իր աշխատանքները սկսեց հունիսի 4-ին Ալիշեր Նավոյու անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենքում։ Բացման խոսքով հանդես եկավ ՍՍՌՄ ԳԱ Թղթակից անդամ Ն. Ժուկովը։ Հռետորը նշեց, որ արևելագետների կոնֆերանսի հրավիրման փաստը ինքնին ցույց է տալիս մեր պարտիայի և կառավարության այն մեծ ուշադրությունը, որ նա նվիրում է Արևելքի երկրների ուսումնասիրման գործին։ Արևելքի երկրների քաղաքական, տնտեսական և կուլտուրական զարգացումը վերջին տարիներին մեծ պահանջներ է առաջադրում մեր գիտությանը, մինչդեռ արևելագիտության մակարդակը դեռևս հետ է մնում այդ պահանջներից։ Եվ պատահական չէ սովետական արևելագիտության կենտրոններից մեկի՝ ՍՍՌՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի գործունեության խիստ քննադատությունը ՍՄԿԿ-ի 20-րդ համագումարում։

Սովետական գիտությունը, ընդհանրապես, մեծ նվաճումներ է ձեռք բերել։ Որոշ հաջողությունների են հասել նաև արևելագետները։ Մենք ունենք մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ, մասնավորապես Միջին Ասիայի արխեոլոգիայի և Արևելքի կուլտուրական ժառանգության ուսումնասիրության գործում։ Միջին Ասիայում, Անդրկովկասում և ազգային մյուս ռեսպուբլիկաներում մեծ հաջողություններ են ձեռք բերվել նաև գիտական կադրեր՝ արևելագետներ պատրաստելու բնագավառում։

Իր ելույթի վերջում Ն. Ժուկովը հաջողություններ և բեղմնավոր աշխատանք ցանկացավ կոնֆերանսին։

«Սովետական արևելագիտության վիճակը և խնդիրները ՍՄԿԿ-ի 20-րդ համագումարի որոշումների լույսի տակ» թեմայով հանդես եկավ ՍՍՌՄ ԳԱ Արևելագիտական ինստիտուտի դիրեկտոր Բ. Գաֆուրովը։ Լուսաբանելով Սովետական Միության արևելագիտության զարգացման պատմությունը, զեկուցողը կանգ է առնում հատկապես սովետական գիտնականների վերջին տարիների նվաճումների վրա։ Սակայն, նշում է զեկուցողը, սովետական արևելագիտությունը չի կարողացել մարքսիստական ճիշտ դիրքերից բացահայտել ներկա էտապում Ասիայի երկրների ժողովուրդների կյանքում տեղի ունեցող պրոցեսների նշանակությունը, հատկապես Ասիայում նոր պետությունների ստեղծման պրոցեսը, չի կարողացել լուսաբանել գաղութակալության դեմ Արևելքի ժողովուրդների մղած պայքարի բազմազան ձևերը։

20-րդ համագումարի որոշումները մեծ խթան են հանդիսանում սովետական արևելագիտության հետագա բազմակողմանի զարգացման համար։ Այդ որոշումները օգնում են ճիշտ կերպով լուսաբանելու Արևելքի երկրներում իշխող դրությունը, բացահայտելու այն փաստը, որ կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի և համաշխարհային սոցիալիստական լագերի գոյության պայմաններում՝ աշխատավորական մասսաների հակաիմպերիալիստական ակտիվ պայքարի հետևանքով է, որ Արևելքի առանձին երկրները ազատագրվում են իմպերիալիստական կախվածությունից։

Այնուհետև զեկուցողը մանրամասն պատմում է Արևելագիտական ինստիտուտի աշխատանքների վերակազմակերպման տարբեր կողմերի մասին։ Ինստիտուտի աշխատակիցների գլխավոր ուշադրությունը ներկայումս ուղղվում է ժամանակակից Արևելքի երկրների արդի վիճակի պրոբլեմների մշակմանը, ընդ որում կենտրոնական տեղ է դրավում «Գաղութային սիստեմի և իմպերիալիզմի գաղութային քաղաքականության ճգնաժամը և անկումը ներկա էտապում» թեման։ Նախատեսվում է հատկապես Արևելքի երկրների ազգային-ազատագրական շարժման և նրա շարժիչ ուժերի խոր ուսումնասիրումը։

Զեկուցողը ընդգծում է արևելագիտական կադրերի պատրաստման կարևորությունը, մի խնդիր, որին դեռևս անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում։ Վերջում նա խոսում է երկրի տարբեր արևելագիտական հիմնարկների աշխատանքների կոորդինացիայի անհրաժեշտության մասին և այդ կապակցությամբ առաջ է քաշում մի շարք կոնկրետ առաջարկներ։

Արևելագիտական ինստիտուտի դիրեկտոր ակադեմիկոս Գաֆուրովի զեկուցման կապակցությամբ ռեսպուբլիկաներում արևելագիտության վիճակի մասին զեկուցումներով հանդես եկան Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ վիցե-պրեզիդենտ Ա. Սումբաթզադեն, Ուզբեկական ՍՍՌ ԳԱ Արևելագիտական ինստիտուտի դիրեկտոր Ս. Ադիմջանովան, Թուրքմենական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ Գ. Զարբեը, Վրացական ՍՍՌ ԳԱ վիցե-պրեզիդենտ Գ. Մերենթելին, Տաջիկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ Ս. Ուսմարովը և Հայկական ՍՍՌ ԳԱ վիցե-պրեզիդենտ Մ. Ներսիսյանը։

Հայ պատմագրությունը և բանասիրությունը, նշում է Մ. Ներսիսյանը, արևելագիտությանը միշտ էլ կարևոր տեղ է տվել։ Հին և Միջին դարերի հայ պատմիչների աշխատություններում բազմաթիվ էջեր են հատկացվել Մերձավոր և Միջին Արևելքի երկրներին։ Բազմաթիվ հայ գիտնականներ հատուկ աշխատություններ են գրել արևելագիտության տարբեր հարցերին նվիրված։ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներում Արևելքի ժողովուրդների պատմության, դրականության, լեզվի և արվեստի վերաբերյալ մի շարք հետաքրքիր աշխատություններ են գրել Մեսրոբ Թադիադյանը, Խաչատուր Աբովյանը, Մկրտիչ Էմինը, Ստեփանոս Նազարյանը, պրոֆ. Ք. Պատկանովը, պրոֆ. Գ. Խալաթյանցը և ուրիշները։

Սովետական իշխանության տարիներին հայ պատմաբանները և բանասերները մի շարք արժեքավոր հետազոտություններ են կատարել Արևելքի ժողովուրդների հին և միջնադարյան պատմության, հայ և հարևան արևելյան ժողովուրդների կուլտուրական կապերի և փոխազդեցությունների վերաբերյալ։ Հատկապես կարելի է նշել այնպիսի ականավոր գիտնականների, ինչպիսիք են՝ Ի. Օրբելին, Գ. Ղափանցյանը, Հ. Աճառյանը, Ռ. Աբրահամյանը և ուրիշները։

Վերջին տասնամյակում Հայաստանում աճել են նաև երիտասարդ արևելագետներ, որոնք զբաղվում են Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նոր և նորագույն շրջանի պատմությամբ։ Խոսելով ռեսպուբլիկայի արևելագետների առաջ ծառացած խնդիրների մասին՝ զեկուցողը նշում է, որ իր կարծիքով դրանցից կարևորագույններն են՝ Մերձավոր և Միջին Արևելքի ժամանակակից էկոնոմիկայի, կուլտուրայի և աշխատավորական մասսաների պայքարի հետ կապված թեմաների ուսումնասիրումը, 19—20-րդ դդ. Մերձավոր և Միջին Արևելքում ծավալված ազգային-ազատագրական և ռևոլյուցիոն շարժումների պատմության գիտական ուսումնասիրության շարունակումը, ուրարտագիտության, խեթագիտության, ասորագիտության հետ կապված թեմաների, ինչպես նաև հայ և հարևան արևելյան ժողովուրդների դրական ու կուլտուրական կապերի, փոխազդեցությունների թեմաների մշակումը։ Բացի այդ անհրաժեշտ է սիստեմատիկորեն ռուսերեն և որևէ օտար լեզվով հրատարակել դեռևս չհրապարակված հայկական աղբյուրները Մերձավոր և Միջին Արևելքի երկրների մասին։ Պետք է ուժեղացնել բուրդ ժողովրդի պատմության, կուլ-

սության, լեզվի, ազգագրության և ընդհանրապես նրա ներկա կյանքի և պայքարի հարցերին նվիրված գիտահետազոտական աշխատանքները։

Զեկնարներում լսվեցին նաև մի քանի հետաքրքիր զեկուցումներ, ինչպես՝ «Չինաստանում ժողովրդական ռևոլյուցիայի հաղթանակի միջազգային նշանակությունը» (զեկուցող պատմ. դիտ. թեկնածու Ա. Կրիմով), «Լենինին և նրա աշխատությունների նշանակությունը գիտության զարգացման համար» (զեկուցող Ուզբեկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ Ս. Ասդուլան) և այլն։

Զեկնարներից հետո սկսվեցին սեկցիոն աշխատանքները։ Տարբեր ռեսպուբլիկաների գիտնականները հաղորդումներով հանդես եկան յոթ սեկցիաներում։

«Սովետական Արևելքի ժողովուրդների պատմությունը սեկցիայում» (1-ին սեկցիա) հաղորդումներ լսվեցին ռեսպուբլիկաներում սոցիալիստական շինարարության հաջողությունների մասին։ Այս սեկցիայում լսվեցին հետևյալ թեմաներով հաղորդումներ։ «Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո Ադրբեջանի տնտեսական հետամնացության լիկվիդացիան» (զեկուցողներ պատմ. դիտ. թեկնածուներ Զ. Ազիզբեկովա և Մ. Կազիև), «Սոցիալիստական վերակառուցումը Վրացական ՍՍՌ-ում» (զեկուցող տնտ. դիտ. դոկտոր Գ. Գուգուշվիլի), «Սոցիալիստական շինարարության հաջողությունները Դաղստանում» (զեկուցող պատմ. դիտ. դոկտոր Գ. Գանիալով), «Ուզբեկական սոցիալիստական ազգի կազմավորումը» (զեկուցող պատմ. դիտ. թեկնածու Մ. Վահաբով) և այլն։

Այս սեկցիայում հաղորդումով հանդես եկավ նաև տնտ. դիտ. թեկնածու Գ. Իսահակյանը՝ «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը» թեմայով։ Զեկուցողը նշեց, որ Սովետական իշխանության հաղթանակը փրկեց հայ ժողովրդին ֆիզիկական ոչնչացումից, օտարերկրյա իմպերիալիզմի և նրա բուրժուա-նացիոնալիստական վարձակալների ծանր լծից և Հայաստանի աշխատավորության համար լայն ուղի հարթեց տնտեսական և կուլտուրական բարգավաճման համար։ Սոցիալիստական ինդուստրիալիզացիայի քաղաքականության իրականացման հիման վրա հնգամյակների ընթացքում Հայաստանը մեծ հաջողությունների հասավ սեփական էներգետիկայի բազա ստեղծելու և արդյունաբերությունը զարգացնելու ուղղությամբ։ Թվական հարուստ փաստերով զեկուցողը ցույց տվեց այն խորը սոցիալ-տնտեսական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել Հայաստանում և որոնք ամբողջովին փոխել են ռեսպուբլիկայի դեմքը։ Ցարական Ռուսաստանի հետամնաց ագրարային ծայրամաս լինելուց Հայաստանը վերածվել է ինդուստրիալ-կոլտնտեսային ռեսպուբլիկայի։ Այս ամենը հասցրեց հայ ժողովրդի ազգային լիակատար վերածննդին և նրա վերակազմավորմանը որպես սոցիալիստական ազգ։ Զեկուցողը վերջում նշեց տնտեսական հետագա զարգացման այն հեռանկարները, որոնք նախատեսված են և իրականացվում են ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ հնգամյա պլանով։

«Արևելքի ժողովուրդների պատմական, տնտեսական և կուլտուրական կապերի սեկցիայում» (2-րդ սեկցիա) լսվեցին մի շարք հաղորդումներ, ըստ որում զեկուցումների մի մասը նվիրված էր սովետական Արևելքի երկրների և Մերձավոր ու Միջին Արևելքի, Հնդկաստանի ու Չինաստանի հետ ունեցած պատմական կապերի բացահայտմանը, իսկ հաղորդումների մյուս մասը վերաբերում էր Ադրբեջանի, Կաբարդինայի, Կիրգիզիայի, Թուրքմենիայի, Ուզբեկստանի և Հայաստանի Ռուսաստանի հետ ունեցած պատմական կապերի հարցերին։

«Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները 17-րդ դարի վերջերին և 18-րդ դարի սկիզբներին» թեմայով հանդես եկավ պատմ. դիտ. թեկնածու Վ. Ոսկանյանը։ Զեկուցողը նշեց, որ հայ-ռուսական տնտեսական, քաղաքական և կուլտուրական հարաբերությունները ծնունդ են առնում դեռևս ռուսական պետականության կազմավորման ժամանակ, ուժեղանում են ռուսական կենտրոնական պետության ձևավորման և ամրացման էպոխայում, հատկապես 16—17-րդ դարերում, երբ Աստրախանի և Ղազանի խանությունների լիկվիդացիայով Ռուսաստանը դառնում է անդրկովկասյան ժողովուրդների հզորագույն հարևանը։ 17-րդ դարում Ռուսաստանի հետ ունեցած հայերի տնտեսական կապերի զարգացումը հնարավոր դարձավ Ռուսաստանում քաղաքների, արհեստների ու առևտրի աճի և համառուսաստանյան շուկայի ստեղծման հետևանքով՝ մի կողմից, Թուրք-պարսկական պատերազմի դադարեցման և Իրանում տնտեսական կյանքի աշխուժացման հետևանքով՝ մյուս կողմից։

Հայ ժողովրդի ազատագրական շարժումը, ընդդեմ թուրքական և իրանական լծի, ծնունդ է առնում 16-րդ դարից և մեծ թափ է ստանում 17-րդ դարի երկրորդ կեսին։ Հայ ժողովուրդը իր ազատագրական պայքարում հենվում էր ռուս ժողովրդի օգնության վրա։ Ազատագրական շարժման աշխուժացման փաստեր էին 1667 թ. պայմանագրի ստորագրումը, հայ կաթողիկոսների դիմումը Ռուսաստանին զինվանագիտական օգնության համար, գաղտնի խորհրդակցությունը Էջմիածնում (1678 թ.) և Անգեղակոթում (1699 թ.), անմիջական ռազմական օգնության խնդիրը և այլն։

Պյոտր 1-ինի պարսկական արշավանքը Անդրկովկասի ժողովուրդների կողմից ընդունվեց որպես եղբայրական օգնություն ազգային-ազատագրական պայքարում և ազգանշան հանդիսացավ դինված ապստամբության համար։ Պյոտր առաջինը և հայկական ազատագրական շարժման ղեկավարները հովանավորում և ուժեղացնում էին Անդրկովկասի ժողովուրդների միավորման տենդենցները։ Ժողովրդական մասսաների լայն շերտերը մեծ հերոսություն և հայրենասիրություն երևան բերեցին իրենց ազգային-ազատագրական պայքարում և Ռուսաստանի հետ միանալու գործում։ Այդ ժամանակաշրջանում դրսևորվեց նաև վրացական, ադրբեջանական և հայ ժողովուրդների պատմական բարեկամությունը և նրանց դաշինքը ընդդեմ օտարերկրյա ճնշողների։

Սեկցիայում տեղի ունեցած մտքերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցողները նշեցին Վ. Ոսկանյանի զեկուցման մեջ առաջ քաշված հարցերի գիտական ճիշտ մեկնաբանությունը։

Հաղորդումները համեմատաբար թույլ էին «Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի պատմության սեկցիայում» (3-րդ սեկցիա)։ Այս սեկցիայում կարդացված թեմաները խայտարղետ էին և որոշ դեպքերում գիտական ցածր մակարդակ ունեին։ Այդպես էր, օրինակ, պատմ. գիտ. թեկնածու Կ. Ուսինբաևի հաղորդումը «Մի քանի տվյալներ 19-րդ դ. 50—70-ական թվականներին Միջին Ասիայում անգլիական բուրժուազիայի գավթողական ձգտումների մասին» թեմայով, որը խիստ քննադատության ենթարկեցին ելույթ ունեցողները։ Այս սեկցիայում լսվեցին այնպիսի հաղորդումներ, ինչպես «Ժամանակակից չինական պատմական գիտությունը և չին ժողովրդի ռևոլյուցիոն անցյալի ուսումնասիրումը» (պատմ. գիտ. թեկնածու Վ. Նիկիֆորով), «Հնդկաստանի ժողովուրդների ազատագրական պայքարի հիմնական մոմենտները (անգլիական նվաճումի սկզբից մինչև 1947 թ.)» (պատմ. գիտ. դոկտոր Ի. Ռեյսներ), «Արաբական երկրների ժողովուրդների պայքարը հանուն միասնության» (պատմ. գիտ. թեկնածու Վ. Լուցկի) և այլն։ Որոշ քննադատության արժանացավ պատմ. գիտ. դոկտոր Ա. Միլլերի հաղորդումը, «Հանուն անկախության թուրք ժողովրդի պայքարի պատմությունից (Ստամբուլի գրավումը Անգլիայի կողմից 1920 թ.)» թեմայով։ Զեկուցողը Ստամբուլի գրավման հիմնական պատճառը համարում էր ո՛չ թե երկրում ծավալվող ազատագրական շարժումը խեղդելու և Սովետական Ռուսաստանի նկատմամբ ինտերվենցիա կազմակերպելու համար անգլիական իմպերիալիստների հետապնդած նպատակները, այլ այն, որ իբր նրանք ուզում էին մշտնջենական օկուպացիայի ենթարկել Ստամբուլը։

«Արևելքի ժողովուրդների հին և միջնադարյան պատմության, արխեոլոգիայի և ազգագրության սեկցիայում» (4-րդ սեկցիա) հանդես եկան պատմ. գիտ. դոկտոր Գ. Մելիքիշվիլին («Ուրարտական էպիգրաֆիկայի ուսումնասիրումը սովետական գիտության մեջ և Ուրարտուի պատմության մի քանի հարցերը»), ակադեմիկոս Մ. Մասոնը («Նոր տվյալներ Հարավային Թուրքմենստանի պատմության և կուլտուրայի պատմության մասին»), պատմ. գիտ. դոկտոր Ի. Պետրուշևսկին («Պարսկական տրակտատ Ղազան խանի ժամանակվա ագրոտեխնիկայի մասին») և ուրիշները։

Այս սեկցիայում մեծ հետաքրքրությամբ լսվեց նաև պատմ. գիտ. թեկնածու Գ. Սարգսյանի հաղորդումը «Հելլենիստական ժամանակաշրջանում հին բաբելական քաղաքների դրության մասին» թեմայով։ Զեկուցողը նշեց, որ Առաջավոր Ասիայի հելլենիստական շրջանի պատմությունը մինչև օրս ուսումնասիրվել է գերազանցապես հունարեն աղբյուրների հիման վրա, որոնք առանձին վերցրած ամբողջական պատկերացում չեն ստեղծում այդ դարաշրջանի հասարակության մասին։ Նրանց մեջ հատկապես շրջանցված է բազմադարյան պատմություն ունեցող տեղական ժողովուրդների ստեղծած սոցիալական և քաղաքական ինստիտուտների դերը հելլենիստական շրջանում։ Այդ բացը նշանակալի չափով լրացվում են մ. թ. ա. 3—2-րդ դդ. սեպագիր աղբյուրներով, որոնց և դիմել է զեկուցողը։ Դրանց ուսումնասիրությունը մասնավոր ապես ցույց է տալիս, որ հիշյալ էպո-

խայում նորաստեղծ հելլենիստական պոլիսների կողքին շարունակվել է բարբարական հին քաղաքների կյանքը, քաղաքներ, որոնք նախորդող երկարատև զարգացման ընթացքում ստացել են Հին Արևելքի համար բնորոշ՝ տաճարային-քաղաքացիական ինքնավար համայնքների կերպարանք։ Այդ համայնքների ինքնավարությունը պաշտոնապես ընդունվել է Սելևկյանների կողմից նույն հիմունքներով, ինչ որ և հելլենիստական պոլիսների ինքնավարությունը, և բարբարական քաղաքներն էլ պոլիսների նման ունեցել են իրենց ներքին ինքնավարական օրգանները և օժտված են եղել զանազան արտոնություններով։

Պոլիսների հետ մեկտեղ այդ համայնքները հանդիսացել են Սելևկյանների պետության հենարանը։ Այս փաստերը ցույց են տալիս, որ այն տեսակետը, թե Սելևկյանների պետությունը եղել է լոկ «բարբարոս» միջավայրում հաստատված հելլենիստական մի պետություն, կարոտ է վերանայման։

«Արևելքի ժողովուրդների դրականությունը սկիթիայում» (3-րդ սեկցիա) լսվեցին մի շարք հաղորդումներ, այդ թվում «Հինդի ժամանակակից դրականության զարգացման հիմնական ուղիները» (ֆիլ. դիտ. թեկնածու Ե. Զելիշև), «Ժամանակակից չինական դրականության վիճակը և զարգացման ուղիները» (ֆիլ. դիտ. թեկնածու Լ. Իյզլին), «Ուզբեկական ժողովրդական էպոսի ուսումնասիրման արդյունքները» (ֆիլ. դիտ. թեկնածու Հ. Զարիֆով) և այլն։ Այս սեկցիայում մեծ հետաքրքրությամբ լսվեց նաև ֆիլ. դիտ. թեկնածու Դ. Կորիձեի հաղորդումը «Վրաց-պարսկական-տաջիկական դրական կապերը» թեմայով։

Դիտական բարձր դնահատականի արժանացավ Ռ. Զուգասդյանի զեկուցումը «Հայ և արևելյան ժողովուրդների դրական կապերի պատմությունից միջնադարում» թեմայով։

Հայ մատենագրությունը,—նշեց զեկուցողը,—որի առաջին կոթողները մեզ են հասել դեռևս 5-րդ դարից, հարուստ տեղեկություններ են պարունակում ոչ միայն Հայաստանի ու հայ ժողովրդի, այլև Մերձավոր Արևելքի և շատ ուրիշ երկրների պատմության ու կուլտուրայի մասին։ Մեզ հասած այդ երկերը պատմական թանկարժեք սկզբնաղբյուրներ լինելով հանդերձ՝ միաժամանակ դրական խոշոր երևույթներ են համաշխարհային ողջ դրականության մեջ։

Ինչպես հայտնի է, 10-րդ դարից սկսում է զարգանալ Մերձավոր Արևելքի դասական դրականությունը, որը բուռն վերելք է ապրում նաև հետագա դարերում։ Հայ դրականությունը նույնպես մասնակից էր Մերձավոր Արևելքի ժողովուրդների գեղեցիկ դպրության ընդհանուր այդ վերելքին։

Տաղաբտական կյանքի զարգացումը, առևտրական հարաբերությունների ընդարձակումը միջնադարում հնարավորություն են տալիս, որպեսզի Արևելքի ժողովուրդները ավելի սերտ կապեր ունենան և ավելի մոտիկից շփվեն միմյանց կուլտուրաների հետ։

Այնուհետև զեկուցողը նշեց, որ խոսելով հայ և պարսկալեզու դրականությունների առնչությունների մասին, պետք է հիշատակել Գրիգոր Մագիստրոսի մոտ պահպանված իրանական ժողովուրդների էպոսի առանձին ֆրագմենտները։ Դրանց ուսումնասիրությունը և Ֆիրդուսու «Շահնամեի» հետ կատարած համեմատությունը իրանական էպոսի առանձին հատվածների վերաբերյալ նոր մանրամասնություններ են հայտնաբերում։

Ֆիրդուսու «Շահնամեի» հիշատակությունը հայ դրականության մեջ առաջին անգամ հանդիպում ենք 13—14-րդ դդ. բանաստեղծ Կոստանդին Երզնկացու մոտ։ Այս փաստը և Դր. Մագիստրոսի մոտ պահպանված իրանական էպոսի առանձին ֆրագմենտները, ըստ երևույթին, հայտնի չեն սովետական արևելագետների լայն շրջաններին և արժանի են մասնագետների ուշադրության։

Հայ և պարսկալեզու դրականությունների հարաբերության հետաքրքիր փաստերից մեկն էլ Ֆրիկի Դիվանում հայատառ պարսկերենով գրված քառյակի առկայությունն է, որի հեղինակի ինքնության հարցը տարբեր խորհրդածությունների և ենթադրությունների առիթ է տվել։

Նորահայտ մի քանի պարսկերեն ձեռագիր աղբյուրներում այս քառյակի հեղինակ են նշվում՝ մի դեպքում 14—15-րդ դդ. ազրբեջանական բանաստեղծ Ֆազլուլլա Նաիմիի աղջիկը և, մի այլ դեպքում՝ նույն դարերում ապրած բանաստեղծ Իմադեդդին Նասիմին։

Սակայն այս փաստերը դեռևս չեն լուծում քառյակի հեղինակի հարցը։ Ինչպես հայտնի է, Ֆրիկը ապրել և ստեղծագործել է 13-րդ դարում, հետևաբար և նա չէր կարող իրենից հետո ապրած գրողի ստեղծագործությունից օգտվել ու թարգմանել։ Քառյակի

հեղինակի ինքնուրույնությունը պարզելու համար պետք է փնտրտուքներ կատարել 13-րդ դարում կամ ավելի վաղ ապրած պարսկալեզու հեղինակների մոտ։

Արևելյան լեզուների սեկցիայում (6-րդ սեկցիա) լսվեցին հետևյալ զեկուցումները. «Էվզարանական հարցերը Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայում» (ֆիլ. դիտ. թեկնածու Ի. Օշանին), «Արաբական արմատի ստրուկտուրայի ուսումնասիրության մասին» (ֆիլ. դիտ. թեկնածու Ա. Լեկիաշվիլի), «Բարդ բայերը հինդուստանի լեզվում» (Ռ. Մուխամեջանով), «Տաջիկական լեզվի բացատրական բառարան կազմելու հիմնական սկզբունքների մասին» (ակադեմիկոս Բ. Նիազմուխամեդով) և ուրիշ զեկուցումներ։

«Արևելյան ժողովուրդների ձեռագրային ժառանգությունը սեկցիայում» (7-րդ սեկցիա) հաղորդումներ եղան ՍՍՌՄ ԳԱ Արևելագիտական ինստիտուտի արխիվում գտնվող միջին-ասիական և արաբական ձեռագրերի մասին (ֆիլ. դիտ. թեկնածու Վ. Բելյաև), Ադրբեջանի Ձեռագրատանը գտնվող Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների կլասիկների ձեռագրերի մասին (ֆիլ. դիտ. թեկնածու Մ. Սուլթանով), Վրաստանի թանգարանի և պատմական արխիվի պարսկական պատմական փաստաթղթերի մասին (պատ. դիտ. թեկնածու Վ. Փուրթուրիձե) և այլն։

«Մատենադարանի պարսկական ձեռագրերի պատմագրական արժեքի մասին» հաղորդումով հանդես եկավ պատ. դիտ. թեկնածու Հ. Փափազյանը։ Առաջին անգամ լինելով սովետական արևելագիտության առաջ, վեր էր հանվում մատենադարանի պարսկերեն ձեռագրերի թեև ոչ շատ մեծ, սակայն արժեքավոր և ունիկալ բնագրեր պարունակող կոլեկցիայի պատմագրական արժեքը։

Զեկուցողը կանգ առավ պարսակալեզու պատմագրության նշանավոր ներկայացուցիչների մի շարք կարևոր սկզբնաղբյուրների վրա, ապա ավելի հանգամանորեն նկարագրեց մի քանի խիստ արժեքավոր և եզակի ձեռագրեր, վեր հանելով և ընդգծելով նրանց բացառիկ նշանակությունը Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների, ինչպես նաև Մերձավոր Արևելքի ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար։

Առանձնապես գիտական հետաքրքրություն առաջացրին զեկուցման այն հատվածները, որոնք վերաբերում էին բրդական առանձին ցեղերի պատմության համար կարևոր նշանակություն ունեցող նորահայտ սկզբնաղբյուրների վերլուծությանը։

Փափազյանի զեկուցման նյութ հանդիսացող ձեռագրերի մեծ մասի լուսանկարները ցուցադրված էին նիստերի դահլիճին կից ձեռագրերի ցուցահանդեսի մատենադարանին հատկացված ցուցափեղկում։

Հունիսի 11—12-ին կայացան կոնֆերանսի եզրափակիչ նիստերը։ Ընդարձակ և բովանդակալից ճառով հանդես եկավ Ուզբեկական ՍՍՌ կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Մուխիտդինովը։

Կոնֆերանսը վերջում սովետական արևելագիտության հետագա զարգացման համար կոնկրետ որոշումներ ընդունեց։ Որոշվեց ՍՍՌՄ ԳԱ Արևելագիտական ինստիտուտը դարձնել արևելագիտության գլխավոր կենտրոնը և կոորդինացիայի ենթարկել երկրի բոլոր արևելագիտական ինստիտուտների աշխատանքները, արևելագիտական ինստիտուտներ ստեղծել Ադրբեջանում և Վրաստանում, առաջարկել նման ինստիտուտների ստեղծումը Հայաստանում և Տաջիկստանում, արևելագիտական լավագույն աշխատությունները թարգմանել և հրատարակել համապատասխան արևելյան և հիմնական եվրոպական լեզուներով, սերտ կապեր ստեղծել ժողովրդա-դեմոկրատական երկրների և արևելյան մյուս երկրների պրոգրեսիվ արևելագետների հետ, ուժեղացնել կադրերի պատրաստումը արևելագիտության գծով և այդ նպատակով արևելագիտական ուսումնական ինստիտուտներ ստեղծել Մոսկվայում և Տաշքենդում, առաջարկել որպեսզի 1957—58 թթ. ուսումնական տարվանից Սովետական Միության միջնակարգ դպրոցներում մտցվեն Արևելքի ժողովուրդների, առաջին հերթին Չինաստանի և Հնդկաստանի պատմության դասավանդումը, ուժեղացնել այդ առարկայի ուսումնասիրումը ֆիլոլոգիական ֆակուլտետներում և մանկավարժական ինստիտուտներում, վերջապես կազմակերպել Արևելագետների համամիութենական ընկերություն և այլն։

Հ. Ե.